ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Քրիստիննե Գրիգորյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2021թ. դեկտեմբերի 8-ից 10-ը:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC):

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի (CCPCJ) 30-րդ վերագումարված նստաշրջանին:

Քննարկված թեմաները՝ Հանցավորության կանխարգելման, անօրինական միգրանտների, մասնավորապես կանանց և երեխաների, այդ թվում առանց ուղեկցության միգրանտ երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցեր, անօրինական միգրացիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներին, ինչպես նաև ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) գործունեության բյուջեի և ռազմավարական ուղղությունների մշակմանն առնչվող և այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի (CCPCJ) 30-րդ վերագումարված նստաշրջանի ընթացքում հանդես է եկել ելույթով:

ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալն իր ելույթում անդրադարձել է նաև անօրինական միգրացիայի դեմ պայքարի ոլորտում առկա ՀՀ իրավակարգավորումներին՝ ներկայացնելով 2021թ. ընդունված ՀՀ քրեական ու քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված առաջադեմ կարգավորումները՝ շեշտելով դրանց համապատասխանելիությունը միջազգային լավագույն չափորոշիչներին:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալը ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի (CCPCJ) 30-րդ վերագումարված նստաշրջանի ընթացքում ծանոթացել է անօրինական միգրացիայի, հանցավորության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում այլ պետությունների ձեռնարկած քայլերին, ինչպես նաև մասնակից է դարձել քրեական արդարադատության համակարգի մարտահրավերների հաղթահարման միասնական մոտեցումների ձևավորման աշխատանքներին:

ՀՀ արդարադատության նախարարի

առաջին տեղակալ

Recoverable Signature

X

Kristinne Grigoryan

Signed by: GRIGORYAN KRISTINNE 7708810450 **Քրիստիննե Գրիգորյան**

14.12.2021թ.